«ՍԳԿԿ» ԻԿԿ Կ ա ր գ ա պ ա հ ա կ ա ն հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ի ն ի ս տ ի

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Թ Ի Վ

(Կազմված է «31» մայիսի 2024թ.)

ք.Երևան, Արշակունյաց 5.108 սենյակ 24.05.2024թ., ժամը 17:00

Համաձայն Արդարադատության նախարարություն մուտքագրված «Կուչինա» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Արմեն Մելքումյանի թիվ Մ/6839-2024 դիմումը «Կուչինա» ՍՊԸ–ի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի գործողություններում կառավարչի վարքագծի կանոնների խախտման հնարավոր առկայության, ինչպես նաև «Սնանկության մասին» օրենքի 27.2. հոդվածի 4-րդ մասի նորմով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու նպատակով ս/թ.-ի մայիսի 31-ին հրավիրված Կարգապահական հանձնաժողովի հետաձգված նիստի շարունակություն:

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝

Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Ադամյանը

Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը

«Կուչինա» ՍՊԸ–ի սնանկության գործով կառավարիչ՝ Գևորգ Ավագյանը

Բողոքաբեր՝ Կուչինա» ՍՊԸ ներկայացուցիչ փաստաբան՝ Արմեն Մելքումյանը

«Կուչինա» ՍՊԸ–ի տնօրեն՝ Սուրեն Մելքումյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Հանձնաժողովի Նախագահ՝Արմինե Մովսիսյանը

Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը

Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը

«Կուչինա» ՍՊԸ–ի սնանկության գործով կառավարիչ՝ Գևորգ Ավագյան

Բողոքաբեր՝ Կուչինա» ՍՊԸ ներկայացուցիչ փաստաբան՝ Արմեն Մելքումյան

«Կուչինա» ՍՊԸ–ի տնօրեն՝ Սուրեն Մելքումյանը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Արդարադատության նախարարություն մուտքագրված «Կուչինա» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Արմեն Մելքումյանի թիվ Մ/6839-2024 դիմումը «Կուչինա» ՍՊԸ–ի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի գործողություններում կառավարչի վարքագծի կանոնների խախտման հնարավոր առկայության քննարկման հարցը, «Կուչինա» ՍՊԸ–ի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտեից վերցրած ապացուցողական փաստաթղթերի ներկայացումը:

ԼՍԵՑԻՆ

Կարգապահական հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանին, ով առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցի վերաբերյալ կառավարչի և ներկայացուցիչ փաստաբանի հիմնավորումները: Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց ստացված Դատարանի որոշումը, նրան կից բողոքաբերի բողոքը:

Հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանիը առաջարկեց աշխատանքային հետևյալ կարգը՝

1. Լսել բողոքաբեր «Կուչինա» ՍՊԸ ներկայացուցիչ փաստաբան՝ Արմեն Մելքումյանին;

2. Լսել «Կուչինա» ՍՊԸ–ի սնանկության գործով կառավարիչ՝ Գևորգ Ավագյանին;

3.Ուսումնասիրել բողոքաբերի տրամադրած փաստաթղթերը;

4.Ուսումնասիրել կառավարիչ Գևորգ Ավագյանի կողմից ներկայացվող փաստաթղթերը:

Հանձնաժողովի անդամները, սնանկության գործով կառավարիչը համաձայնեցին աշխատանքային կարգին :

Ելույթ ունեցավ «Կուչինա» ՍՊԸ ներկայացուցիչ փաստաբան՝ Արմեն Մելքումյանը, որը հանձնաժողովին ներկայացրեց, որ 28.06.2021թ.-ին դատական վճռի հիման վրա Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը, քննելով քաղաքացիական գործը ըստ հայցի՝ «Կուչինա» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանն ընդդեմ «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի, երրորդ անձ՝ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության գույքերն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ վերադարձնելու պահանջի մասին, հայցը մերժել է: «Կուչինա» ՍՊԸ ներկայացուցիչ փաստաբան՝ Արմեն Մելքումյանը պնդեց, որ սնանկության կառավարիչ Գևորգ Ավագյանը իր լիազորությունները ամբողջությամբ չի կատարում, չի իրականացնում համապատասխան գործողություններ գույքերը հայտնաբերելու համար:

Հարցի վերաբերյալ ելույթի ձայն վերցրեց սնանկության կառավարիչ Գևորգ Ավագյանը: Որոշակիություն մտցնելու նպատակով,Ավագյանը հայտնեց, որ 08.09.2022թ.-ին ինքը գրություն է ուղարկել «Կուչինա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ փաստաբան Արմեն Մելքումյանին, որով պարզաբանել է, որ ընկերության տնօրեն Սուրեն Մելքոնյանի կողմից իրեն հանձնված փաստաթղթերում չկան հիմնական միջոցների գույքագրման ցուցակներ, հարկային մարմին հանձնած հաշվապահական հաշվեկշռում և շահութահարկի տարեկան

հաշվետվություններում ընկերության հիմնական միջոցների տողերում լրացված են զրո, այսինքն՝ ընկերությունը երբևէ իր անվամբ չի ունեցել հաշվարկված հիմնական միջոցներ: 09.06.2017 թ.-ին նշանակվել և կատարվել է «Կուչինա» ՍՊԸ-ի գույքի գույքագրման աշխատանքներ, որով արձանագրվել է, որ ընկերությունը գույք չունի: Իսկ «Կուչինա» ՍՊԸ-ի տնօրեն Սուրեն Մելքոնյանը չի առարկել գույքագրման արդյունքների մասով: Սնանկության կառավարիչ Գևորգ Ավագյանը փաստեց, որ դիմել է ՀՀ Գլխավոր Դատախազություն «Կուչինա» ՍՊԸ-ին պատկանող գույքերը հայտնաբերելու համար:Դատարանի և կառավարչի կողմից կատարված հարցումների արդյունքում «Կուչինա» ՍՊԸ-ի անվամբ որևիցե գույք կամ ակտիվ չի հայտնաբերվել: «Կուչինա» ՍՊԸ-ի տնօրեն Ս.Մելքումյանը 02.05.2013թ.-ին կնքված համաձայնագրի բնօրինակն է հանձնել սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանին, որով ընկերության սեփականատեր Արթուր Ղարիբյանը ընկերության տնօրենին օգտագործման իրավունքով հանձնել է ճաշարանային գույք, որն էլ ընկերության կողմից օգտագործվել է ՀՀ ԱԻ նախարարությունում՝ «Կուչինա» ՍՊԸ-ի կողմից վարձակալած ճաշարանում, որը կողմերի միջև կազմված 14.04.2017 թ.-ի հանձման-ընդունման ակտով ի պահ է հանձնվել ՀՀ ԱԻ նախարարությանը:

Վերոնշյալ գրությունով սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանը վկայակոչեց, որ օգտագործման իրավունքը չի հանդիսանում սեփականության իրավունք և հորդորեց, որ եթե «Կուչինա» ՍՊԸ-ն ունի գույք, ապա կառավարչին տեղեկատվություն տալ դրա վերաբերյալ և պարզաբանել, թե ինչու է ընկերության տնօրենը թաքցրել տվյալ գույքը:

Ապացուցողական բոլոր փաստաթղթերը հանձնվեցին հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանին և հանձնաժողովի անդամներին: Հանձնաժողովի անդամները համաձայնեցին այն մտքին, որ ներկայացված փաստական հանգամանքները բավական են, որ սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ կայացվի ժողովի որոշում:

Հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանը առաջարկը դրեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ուսումնասիրելով գործը, նաև հաշվի առնելով Գևորգ Ավագյանի 19.04.2024 թ.-ի «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին ներկայացված բացատրությունը, կարգապահական հանձնաժողովը նշանակել է հանձնաժողովի նիստ թվով 2(երկու) անգամ և եկել եզրակացման, որ ԵԿԴ/0545/04/16 սնանկության գործով «Կուչինա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արմեն Մելքումյանի կողմից փաստական տվյալներ չեն տրամադրվել վերոնշյալ 21 անվանում գույքի վերաբերյալ,

մասնավորապես՝ դրանք ում միջոցներով են ձեռք բերվել, կամ արդյոք պատկանում են «Կուչինա» ՍՊԸ-ին, իսկ սնանկության գործերով կառավարիչ Գևորգ Ավագյանի փաստարկները բավարար են վեճի առարկա հանդիսացող գույքը չհամարելու ընկերության սեփականություն: Կարգապահական հանձնաժողովը անհրաժեշտ է համարել իրականացնել «Կուչինա» ՍՊԸ-ի հաշվապահական հաշվառման փաստաթղթերի ուսումնասիրություն և հարկային հաշվետվությունների վերլուծություն: Արդյունքում պարզ դարձավ, որ.

«Կուչինա» ՍՊ ընկերությունը 2014 թ.-ի ապրիլի 4-ին ՀՀ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգով 2013 թ.-ի համար ներկայացրել է ՀՀ ռեզիդենտ շահութահարկի հաշվարկի հաշվետվություն՝ ձև 110-ը, համաձայն որի աղյուսակ N3-ում հարկման նպատակով հիմնական միջոցների ամորտիզացիոն ժամկետներ կամ տոկոսադրույքներ չեն նշվել, իսկ աղյուսակ N6-ում ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքներ և հարկային բազաներ չեն արտացոլվել, մասնավորապես աղյուսակի 1-ին և 2-րդ տողերում, այն է՝ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ, որևէ գրառում չի կատարվել: Հիմնական միջոցների վերաբերյալ որևէ արձանագրություն բացակայում է նաև աղյուսակ N 5-ում, որտեղ կատարվում են ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությանը վերաբերող բացահայտումներ: Համանման պատկեր է նաև «Կուչինա» ՍՊԸ-ի ներկայացրած 2012 և 2013 թ.-ներին վերաբերող շահութահարկի պարզեցված հաշվարկներում:

Փաստաթղթերի ուսումնսիրությունից հետո ձայն խնդրեց հանձնաժողովի անդամ Ռուբեն Խալաթյանը, ըստ որի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանը տվյալ սնանկության վարույթում կատարել է օրենքով սահմանված իր պարտականությունները և չի թերացել դրանց կատարման մեջ:

Մնացած անդամները համաձայնեցին Ռուբեն Խալաթյանի հետ:

Հանձնաժողովի Նախագահն հարցը դրեց քվերակության

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ – 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Կուչինա» ՍՊԸ-ի սնանկության գործերով կառավարիչ Գևորգ Ավագյանի գործողություններում չկան խախտումներ, վերջինս գործել է ՀՀ Օրենսդրության շրջանակներում, քանի որ վեճի առարկա հանդիսացող գույքը սեփականության իրավունքով պատկանել է ֆիզիկական անձի, որը վերաբերելի չէ «Կուչինա» ՍՊԸ-ին, առկա չեն «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի Էթիկայի» կանոնների խախտման դեպքեր, ուստի /մեղքի/ բացակայության պատճառաբանությամբ հարուցված Կարգապահական վարույթը կարճել::

2.Սույն Որոշումը և նյութերը ներկայացնել «ՍԳԿԿ»ԻԿԿ համապատասխան կառավարման մարմնի հաստատմանը:

3.Հաստատումից հետո հնգօրյա ժամկետում սույն որոշման օրինակը ուղարկել ՀՀ Արդարադատության նախարար Գ.Մինասյանին, ՀՀ Սնանկության Դատարանի դատավոր Ա.Խաչատրյանին, ՀՀ Պետական Եկամուտների կոմիտեի նախագահ՝ Ռ.Բադասյանին:

Հանձնաժողովի նախագահ՝ Արմինե Մովսիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռուբեն Խալաթյան

Արմենակ Աղամյան

Հարություն Գևորգյան